ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

27 ՓԵՏՐՎԱՐԻ 2025թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 16 անդամներ:

Բացակա էին՝ Արման Մարուխյանը, Արմեն Կոստանյանը, Լուսինե Ադամյանը, Վարդուհի Բաղալյանը, Էդգար Վարդանյանը, Զարուհի Կիրակոսյանը, Օհան Օհանյանը, Նաիրա Խանդանյանը, Սամվել Զաքոյանը, Վալտեր Գեվորգյանը, Միքայել Միքայելյանը

<u>Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝</u>
Հակոբ Սարգսյան, Ալվարդ Մանուկյան, Լիլիթ Բաբինյան, Անի Պողոսյան, Արծրուն Ղուրշուդյան, Դավիթ Մազմանյան

<u>Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Գուրգեն Մարտիրոսյանը</u>

<u>Նիստը արձանագրում էր Գավառի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Կարինե Մանուկյանը</u>

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝ առաջարկվում է.

1. Հաստատել Գավառ համայնքի ավագանու արտահերթ նիստի օրակարգը:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 35-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԺԱՄԱՆԱԿ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԸՆՏՐՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀԱԿՈԲ ՍԱՐԳՍՅԱՆ)

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1- ին մասի 14-րդ կետը, 11-րդ հոդվածը, 13-րդ հոդվածի 10-րդ մասը, հաշվի առնելով Գավառ համայնքում մասնակցային բյուջետավորման գործընթացի կառավարման հանձնաժողովի «21» փետրվարի 2025թ-ի արձանագրությունը՝ առաջարկվում է.

1. Հավանություն տալ մասնակցային բյուջետավորման գործընթացի ժամանակ Գավառ համայնքի բնակիչների կողմից 2025 թվականին ներկայացրած և քվեարկության արդյունքում ընտրված առաջարկներին՝ համաձայն հավելված 1-ի:
2. Առաջարկներն իրականացնել «Գնումների մասին» ՀՀ օրենքի և այլ նորմատիվային ակտերի պահանջներին համապատասխան:
3. Առաջարկներն իրականացնելուց հետո ամփոփ հաշվետվություն ներկայացնել ավագանուն:
4. Գավառ համայնքի 30 դեկտեմբերի 2024 թվականի N 371-Ա որոշման «Գավառ համայնքում մասնակցային բյուջետավորման գործընթաց իրականացնելու նպատակով գումար հատկացնելու մասին» առաջին կետում նախատեսված 10.000.000 ՀՀ դրամը փոփոխել և սահմանել 11.000.000 ՀՀ դրամ:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 36-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ 2024 ԹՎԱԿԱՆԻՆ ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ԱՊՐԱՆՔՆԵՐԸ ՀԱՂԹՈՂ ԾՐԱԳՐԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԻՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԼԻԼԻԹ ԲԱԲԻՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հիմք ընդունելով Գավառ համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 08-ի թիվ 44-Ա որոշումը՝ առաջարկվում է.

1. Մասնակցային բյուջետավորման ծրագրի շրջանակներում հաղթող ծրագրերի պատասխանատուներին հանձնել ձեռք բերված ապրանքները /հավելված 1/
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 37-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԴԱՎԻԹ ՄԱԶՄԱՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, ՀՀ հողային օրենսգրքի 61-րդ և 66-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ և 35-րդ հոդվածների, ՀՀ Կառավարության 18.05.2006 թ. «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշման դրույթներով՝ առաջարկվում է.

1. Համաձայնություն տալ Գավառ քաղաք, Կաբելագործների փողոց 7/53 ավտոտնակ հասցեում գտնվող, Գավառ համայնքի սեփականություն հանդիսացող 05-001-0447-0195 կադաստրային ծածկագրով, 0,0036 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողատարածքը և Կարեն Պարգևի Գասպարյանի կողմից կառուցված 44,60 ք.մ արտաքին (39,60 քմ ներքին) մակերեսով ավտոտնակը ուղղակի վաճառքի միջոցով օտարելու ինքնակամ կառույցն իրականացրած անձին:
2. Վաճառքի գին սահմանել հողամասի 1 քմ-ի համար 1221 (մեկ հազար երկու հարյուր քսանմեկ) ՀՀ դրամ, իսկ ավտոտնակի 1 քմ-ի համար 1209 (մեկ հազար երկու հարյուր ինը) ՀՀ դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 38-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԴԱՎԻԹ ՄԱԶՄԱՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, ՀՀ հողային օրենսգրքի 61-րդ և 66-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ և 35-րդ հոդվածների, ՀՀ Կառավարության 18.05.2006 թ. «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշման դրույթներով՝ առաջարկվում է.

1. Համաձայնություն տալ Գավառ քաղաք, Կաբելագործների փողոց 9/97 ավտոտնակ հասցեում գտնվող, Գավառ համայնքի սեփականություն հանդիսացող 05-001-0447-0196 կադաստրային ծածկագրով, 0,00246 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողատարածքը և Գագիկ Հարազատի Քարամյանի կողմից կառուցված 24, 60 քմ արտաքին (23,60 քմ ներքին) մակերեսով ավտոտնակը ուղղակի վաճառքի միջոցով օտարելու ինքնակամ կառոյցն իրականացրած անձին:
2. Վաճառքի գին սահմանել հողամասի 1 քմ-ի համար 1221 (մեկ հազար երկու հարյուր քսանմեկ) ՀՀ դրամ, իսկ ավտոտնակի 1 քմ-ի համար 1209 (մեկ հազար երկու հարյուր ինը) ՀՀ դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 39-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԴԱՎԻԹ ՄԱՋՄԱՆՅԱՆ)

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ և 35-րդ հոդվածների դրույթներով՝ առաջարկվում է.

1. Համաձայնություն տալ Գավառ քաղաք Լևիկ Հարությունյան փողոց 4/3 հողամաս հասցեում գտնվող, Գավառ համայնքի սեփականություն հանդիսացող 05-001-0390-0036 կադաստրային ծածկագրով, 0,00245 հա մակերեսով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության սահմանափակումներ չունեցող հողատարածքը՝ ավտոտնակ կառուցելու նպատակով, աճուրդային կարգով օտարելուն:
2. 05-001-0390-0036 կադաստրային ծածկագրով 0,00245 հա մակերեսով հողատարածքի աճուրդով վաճառքի մեկնարկային գինը մեկ քառակուսի մետրի համար սահմանել 1500 (մեկ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 40-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԴԱՎԻԹ ՄԱՋՄԱՆՅԱՆ)

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ և 35-րդ հոդվածների դրույթներով՝ առաջարկվում է.

1. Համաձայնություն տալ Գավառ քաղաք Լևիկ Հարությունյան փողոց 4/4 հողամաս հասցեում գտնվող, Գավառ համայնքի սեփականություն հանդիսացող 05-001-0390-0037 կադաստրային ծածկագրով, 0,00225 հա մակերեսով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության սահմանափակումներ չունեցող հողատարածքը՝ ավտոտնակ կառուցելու նպատակով, աճուրդային կարգով օտարելուն:
2. 05-001-0390-0037 կադաստրային ծածկագրով 0,00225 հա մակերեսով հողատարածքի աճուրդով վաճառքի մեկնարկային գինը մեկ քառակուսի մետրի համար սահմանել 1500 (մեկ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 41-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ «ԲԱՅԱԶԵՏ ՍԱՆԷՆԵՐՋԻ» ՍՊԸ-Ի ԿՈՂՄԻՑ ԱՐԵՎԱՅԻՆ ՖՈՏՈՎՈԼՏԱՅԻՆ ԿԱՅԱՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐԾՐՈՒՆ ՂՈՒՐՇՈՒԴՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եւ փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով և հիմք ընդունելով 2025 թվականի փետրվարի 24-ին Գավառի համայնքապետարանում կայացած հանրային լսման արձանագրությունը՝ առաջարկվում է.

1. Համաձայնություն տալ ՀՀ Գեղարքունիքի մարզի, Գավառ քաղաքի վարչական տարածքում «Բայազետ սանէներջի» ՍՊԸ-ի կողմից 8050 ԿՎՏ հզորությամբ արևային ֆոտովոլտային կայանի կառուցման աշխատանքներին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 42-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ «ՍՈԼԱՐՍԻՆԵՐՋԻ» ՍՊԸ-Ի ԿՈՂՄԻՑ ԱՐԵՎԱՅԻՆ ՖՈՏՈՎՈԼՏԱՅԻՆ ԿԱՅԱՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ԱՐԾՐՈՒՆ ՂՈՒՐՇՈՒԴՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եւ փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով և հիմք ընդունելով 2025 թվականի փետրվարի 24-ին Գավառի համայնքապետարանում կայացած հանրային լսման արձանագրությունը՝ առաջարկվում է.

1. Համաձայնություն տալ ՀՀ Գեղարքունիքի մարզի, Գավառ քաղաքի վարչական տարածքում «ՍՈԼԱՐՍԻՆԵՐՋԻ» ՍՊԸ-ի կողմից 8050 ԿՎՏ հզորությամբ արևային ֆոտովոլտային կայանի կառուցման աշխատանքներին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 43-Ա)*

Ավագանու անդամներ

ԳՈՒՐԳԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ԴԱՇՏՈՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՀՐԱՅՐ ԳՈՒԼԱԲՅԱՆ

ԱՐՍԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԳՆԵԼ ՄԿՐՏՉՅԱՆ

ԱՐՏԱԿ ՋԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ

ՕՆԻԿ ԴԱՆՈՅԱՆ

ԱԼԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՌՈՒԶԱՆՆԱ ՊՈՂՈՍՅԱՆ

ՄԱՐԻԱՄ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՆՈՒՆԵ ՄԻՐԻԲՅԱՆ

ԱՆԻ ՊԵՏՈՅԱՆ

ԼԱՎՐԻԿ ԱՐԵՎՇԱՏՅԱՆ

ԴԱՎԻԹ ՄԻՐԻԲՅԱՆ

ՆՈՐԱՅՐ ԶԱԽԱՐՅԱՆ

Համայնքի ղեկավար

ԳՈՒՐԳԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ_____

Նիստն արձանագրեց՝ Կարինե Մանուկյանը

_____